ՀՀ, ք. Երևան

11.10.2024թ.

ՈՐՈՇՈՒՄ
«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ -Ի ՏՆՕՐԵՆԻ

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ համաձայն սույն թվականի օգոստոսի 20-ի ՀՀ Ֆինանսների նախարարության № 03/26-1/17361-2024 գրության համաձայն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ն գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված է «Էսզեթ ֆարմ» և «Աննարկա» ՍՊԸ-ների հետ, ինչն ինքնաբերաբար հանգեցնում է և «Աննարկա» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակմանը:

Հաշվի առնելով, որ առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի պահանջներով՝ մասնկացին առաջարկվել էր 10 (տասը) օրվա ընթացքում վճարել պայմանագրի (2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամ) և որակավորման (3.000.000 (երեք միլիոն) ՀՀ դրամ) ապահովումները: Մանակցի կողմից «ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-ի հաշվեհամարին վճարում չի իրականացվել:

ԵՎ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով, ինչպես նաև նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «Աննարկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար հիմքերը գնահատել բավարար:
2. «Աննարկա» ՍՊԸ-ի տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:
3. Ստորև ներկայացվում է «Աննարկա» ՍՊԸ-ի տվյալները՝ համաձայն սահմանված ձևաչափի:

Մասնակցի						
			գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
անվանումը	ՀՎՀՀ/ ֆիզ. անձի դեպքում հարկային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Աննարկա» ՍՊԸ	02656691	ՀՀ, Քաջազնունի 11/23	v			ՍԳԼ-ԷԱՇՏԱՊՁԲ-24/23

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՄԱՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ